ՀԱՁԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ – ՀԱՅԱՍՏԱՆ ՊՈԱԿ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆ

2009թ. հոկտեմբեր

ՀԱՁԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ – ՀԱՅԱՍՏԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Ֆինանսական տարվա ընթացքում Միջկառավարական համաձայնագրի իրականացման ընդհանուր առաջընթացը

Նկարագրեք նախորդ 12-ամսյա ժամանակահատվածում (2008թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2009թ. սեպտեմբերի 30-ը) Միջկառավարական համաձայնագրով սահմանված նպատակների նվաճման առումով տեղի ունեցած առաջընթացը (ծրագրի և/կամ բաղադրիչների կտրվածքով): Նկարագրեք նաև մինչ օրս տեղի ունեցած առաջընթացը: (Օրինակ. 2008թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2009թ. սեպտեմբերի 30-ը ժամանակահատվածում համայնքների զարգացման ծրագրի շրջանակներում ուսուցանվել է 10,000 ֆերմեր: Այսպիսով, 2009թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ Միջկառավարական համաձայնագրի իրականացման ընթացքում ուսուցանված ֆերմերների ընդհանուր թիվը կազմում է 23,000): Տվյալ բաժինը կարող է հիմնվել եռամսյակային հաշվետվությանը կցվող ՅՀԱ-ի վրա և լրացնել այն՝ անդրադառնալով նաև այն ծրագրային ձեռքբերումներին, որոնք չեն արտացոլված ՅՀԱ-ում:

Միջկառավարական համաձայնագրի իրականացման երրորդ տարին նշանավորվել է մի շարք հիմնական ձեռքբերումներով: Ոռոգվող գյուղատնտեսության ենթակառուցվածք բաղադրիչի (ԵԲ) շրջանակներում ավարտվել են մայր ջրանցքների, ինքնահոս համակարգերի, պոմպակայանների և երրորդ կարգի ջրանցքների առաջին փաթեթի տեխնիկատնտեսական ուսումնասիրության և նախագծման աշխատանքները: Տվյալ առաջադրանքի իրականացման կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՄՀ-Հայաստանը տեղափոխվել է շինարարության փուլ և ծրագրի շրջանակներում արդեն իսկ վերանորոգվել են 6,5 կմ երրորդ կարգի ջրանցքներ, 1,3 կմ մայր ջրանցքներ և 29 ոռոգման կառույցներ: Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրության և Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի չափանիշներին համապատասխան Բնապահպանական ազդեցության գնահատման (ԲԱԳ) և Բնապահպանական կառավարման (ԲԿ) պլանների մշակումը, ինչպես նաև Վերաբնակեցման գործողությունների պլանի իրականացումը նպաստեցին ծրագրում ընդգրկված ինքնահոս համակարգերի շինարարական աշխատանքների մեկնարկին: Գյուղական ճանապարհների վերանորոգման ծրագրի շրջանակներում ավարտվել են Հ17-Արմավիր-Իսահակյան-Գյումրի պիլոտային (փորձնական) 24 կմ հատվածի շինարարական աշխատանքները, շարունակվել են նախագծման, տեխնիկական աուդիտի և շինարարության վերահսկողության աշխատանքները, իսկ Առաջին փաթեթում ներառված և ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ մեկնարկած ճանապարհային հատվածների շինարարության հետագա ճակատագիրը կախված է եղել ՀՄԿ վերջնական որոշումից: ՀՄԿ տնօրենների խորհուրդի 2009թ. հունիսի 10-ի որոշման համաձայն այդ ծրագրի ֆինանսավորումը դադարեցվել է, իսկ շինարարական աշխատանքների հետագա իրականացումը ստանձնել է Հայաստանի կառավարությունը:

Ինչպես և նախորդ տարի, ամենազգալի և հիմնական արդյունքներն արձանագրվել են Ոռոգվող գյուղատնտեսության Ջրից դեպի շուկա ծրագրի /ՋդՇ/ շրջանակներում: Մասնավորապես, ջրի ներտնտեսային կառավարման ոլորտում /ՋՆԿ/ ուսուցանվել է 14,583 ֆերմեր և 12,428 ֆերմեր վերապատրաստվել է բարձրարժեք գյուղատնտեսության /ԲԱԳ/ ոլորտում, որի արդյունքում վերապատրաստված ֆերմերների ընդհանուր թիվը կազմում է 30,159 հոգի: ՋդՇ ծրագրի շրջանակներում ուսոցանվողները հնարավորություն ունեն գործնականում ծանոթանալ ոռոգման տեխնոլոգիաներին և բարձրարժեք գյուղատնտեսության մեթոդներին՝ այցելելով ծրագրի շրջանակներում հիմնադրված 193 ցուցադրական տեղամասեր, որոցից ջրի ներտնտեսային կառավարման ոլորտի 35 և ԲԱԳ 50 տեղամաս հիմնադրվել են Միջկառավարական

համաձայնագրի իրականացման երրորդ տարվա ընթացքում: Այս աշխատանքների արդյունքում ազդեցության մակարդակի առաջին արդյունքները գրանցվել են այս բաղադրիչի շրջանակներում: ՋԴԾ Իրականացնող կազմակերպության կողմից դասավանդման մեթոդների կիրառման հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ավելի քան 9000 ուսուցանվածներ կիրառում են ՋԴԾ ծրագրի շրջանակներում ձեռք բերված առնվազն մեկ փորձ կամ տեխնոլոգիա:

Միջկառավարական համաձայնագրի երրորդ տարում ավարտվեց նաև ՀՄՀ-Հայաստան վարկային բաղադրիչի առաջին փուլը, և մեկնարկեց երկրորդ փուլը: 2009թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ երկրորդ փուլի շրջանակներում տեղաբաշխվել է 3,577,000 ԱՄՆ դոլար՝ ընդհանուր տրամադրված վարկերի գումարը հասցնելով 5,077,000 ԱՄՆ դոլարի: ՀՄՀ-Հայաստանի ֆինանսական միջոցներից օգտվել են ավելի քան 400 վարկառուներ, իսկ վարկերը տրամադրվել են ՋԴԾ հիմնական ծրագրային գործառույթների ուղղությամբ:
2008թ. սեպտեմբերին մեկնարկած Ոռոգման կառավարման կառույցների ինստիտուցիոնալ հզորացման ծրագրի շրջանակներում սկսվեց նախատեսված բոլոր աշխատանքների լիարժեք իրականացումը: Հաշվետու ժամանակահատվածում ավարտվեց 44 ՋՕԸ-երի գնահատումը և մշակվեցին Կառավարման բարելավման 26 պլաններ (ԿԲՊ): Ներկայումս 8 թիրախային ՋՕԸ-ում խորհրդատվական աշխատանքներ են ընթանում ԿԲՊ իրականացման աջակցության ուղղությամբ:

Գյուղական ճանապարհների վերանորոգման ծրագիր (ԳՃՎԾ). *Ծրագրի վերջին տարին*

Միջկառավարական համաձայնագրի իրականացման երրորդ տարին խնդրահարույց էր Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրի համար, քանի որ ՀՄԿ-ն կասեցրեց ծրագրի ֆինանսավորումը: Չնայած որ ծրագրի ապագան անորոշ էր, ԳՃՎԾ շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Արմավիր-Իսահակյան-Գյումրի Հ-17 ճանապարհի 24.5 կմ հատվածի վերանորոգման և հանձնման ավարտական աշխատանքներ: Սպասարկելով տասներկու համայնք երկու մարզերում՝ Արագածոտն և Շիրակ, ճանապարհի վերանորոգված հատվածը բավականին հեշտացրել է այդ գյուղերի կապը երեք մեծ քաղաքների՝ Գյումրու, Արմավիրի և Երևանի հետ, հեշտացրել է համայնքների միջև և արտաքին աշխարհի հետ շփումը, աշխուժացրել է ընդհանուր տնտեսական գործունեությունը, ներառյալ առևտուրը և ապրանքափոխանակությունը: Տարեկան միջին օրեկան երթևեկությունը ճանապարհային այդ հատվածում կազմել է 735 տրանսպորտային միջոց, որը 4%-ով ավել է թիրախային 706-ից:
- Կատարելով ՀՄԿ և ՀՀ կառավարության միջև 2008թ. հուլիսին ստորագրված Լրացուցիչ համաձայնագրով սահմանված պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությունը 16,800,000 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ է հատկացրել Առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհների վերանորոգումը ֆինանսավորելու համար: Գյուղական ճանապարհների Առաջին փաթեթում ընդգրկված էին հանրապետության տարբեր շրջանների ընդհանուր երկարությամբ 273 կմ ճանապարհահատվածներ, որոնցից օգտվում են 73 համայնքներ: 2009թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ այդ ճանապարհահատվածների վրա իրականացվել են տարբեր տեսակի շինարարական աշխատանքներ (ներառյալ հողային աշխատանքները, փոսային նորոգումը, ասֆալտ-

բետոնե ծածկի աշխատանքները, ճամփեզրերի վերականգնումը և այլն): Սակայն ԳՃՎԾ կասեցման արդյունքում ՀՀ կառավարությունը ներկայումս դիտարկում է այդ ճանապարհահատվածներում աշխատանքներն այլ աղբյուրներից ֆինանսավորելու հնարավորությունը:

Ոռոգելի գյուղատնտեսության ծրագիր

Ոռոգման ենթակառուցվածք բաղադրիչ. Առաջ դեպի շինարարություն

- Մայր ջրանցքների առաջին փաթեթի շինարարությունը մեկնարկեց 2009թ. հունվարին, ֆրանսիական Սադե ընկերության և իր հայաստանյան գործընկեր «ՇՄՇ-23»-ի հետ 2008 թ. դեկտեմբերին շինարարական աշխատանքների պայմանագիր կնքելուց հետո: Աշխատանքների առաջին փաթեթի շրջանակներում վերականգնվելու է Արզնի-Շամիրամ մայր ջրանցքի 5.3 կմ հատվածը, որից 4.2 կիլոմետրի վրա իրականվելու է բետոնապատում: Մնացած 5 ջրանցքներում, այն է՝ Արմավիր, Արտաշատ, Ստորին Հրազդան, Շիրակ և Թալին, իրականացվելու է վթարային վիճակում գտնվող ոռոգման կառուցվածքների վերականգնում: Այս պայմանագրի ներքո փորձարկվելու է տորկրետի, ինչպես նաև այլ նորարական տեխնոլոգիաների օգտագործումը մոտ 200 մետր երկարությամբ ջրանցքի հատվածի վրա: Առ այսօր վերականգնվել է Արզնի-Շամիրամ ջրանցքի 1.3 կմ հատվածը, ինչպես նաև 29 կառույցներ: Արտաշատի մայր ջրանցքում կառուցվել է ջրի կառավարման հանգույց: Արզնի-Շամիրամ մայր ջրանցքը (100 կմ ընդհանուր երկարությամբ) անցնում է Արագածոտն և Կոտայք մարզերով և ոռոգում է 25000 հա հողատարածք: Վերականգման աշխատանքների ավարտին ավելի քան 60,000 ջրօգտագործողներ 30 համայնքներում կունենան ջրի կորստի կրճատումից և ջրի կառավարման բարելավումից առաջացած օգուտներ:

  Ոռոգման ենթկառուցվածքի բաղադրիչի շրջանակներում շինարարական աշխատանքների առաջընթացի ուղղությամբ մեկ այլ կարևոր քայլ է Չորս ինքնահոս համակարգերի պայմանագրի կնքումը Արփա-Սևան ԲԲԸ-ի հետ /Հայաստան/: Առաջիկա 20 ամսվա ընթացքում շինարարական աշխատանքներ կիրականացվեն Այգեզարդ, Շենիկ, Մանթաշ և Վարդենիս համակարգերում, որոնք գտնվում են Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում: Ինքնահոս համակարգերում կատարված 5.5 միլիոն ԱՄՆ դոլար ներդրման շահառուներն են այս մարզերի 23 համայնքների ավելի քան 60, 000 գյուղացիներ:

  Ս.թ. սեպտեմբերի 30-ին ՀՄՀ-Հայաստանը կնքեց իր ամենամեծ՝ 17 պոմպակայանների վերականգնման պայմանագիրը Ֆարմեքս Թեքնոլոջիս, Ֆլորիան Լոպեզ և Գաքսե Ինժեներ ֆրանսիական կոնսորցիումի հետ: Նշված 17 պոմպակայանների վերանորոգումը Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Տավուշի և Սյունիքի մարզերի թվով 100 համայնքների ավելի քան 182,000 շահառուներին կապահովի ոռոգման ջրի հուսալի մատակարարում, կնպաստի գյուղատնտեսական արտադրողականության աճին, ինչպես նաև կբարձրացնի էլեկտրաէներգիայի օգտագործման արդյունավետությունը:

- Ներկայումս ՀՄՀ-Հայստանը գնահատում է մայր ջրանցքների շինարարության երկրորդ փաթեթի և երրորդային ջրանցքների առաջին փաթեթի մրցութային առաջարկները:

- Շինարարական աշխատանքների որակի և արդյունավետության հարցում կարևորագույն դեր է կատարում շինարարության վերահսկողությունը և կառավարումը: 2009թ. փետրվարին ՀՄՀ-Հայաստանը շինարարության վերահսկման պայմանագիր է կնքել գերմանական Սի-Ի-Էս Քոնսալթինգ Էնջինիրս (CES Consulting Engineers Salzgitter GmbH), գերմանական Էյ-Էյչ-Թի Գրուփ (AHT GROUP AG) և Երևանի Ճարտարապետության և Շինարարության Պետական Համալսարանից բաղկացած կոնսորցիումի հետ: Պայմանագրով նախատեսում է վեց մայր ջրանցքների, յոթ ինքնահոս համակարգերի վերականգնման, 17 պոմպակայանների նորոգման և արդիականացման, Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի և մի շարք ներտնտեսային ջրանցքների վերականգնման շինարարական աշխատանքների վերահսկողություն: Կոնսորցիումը նաև կիրականացնի աշխատանքային սեմինարներ՝ ուղղված միջազգայնորեն ընդունված շինարարական տեխնոլոգիաների, չափորոշիչների, պահանջների կիրառմանն ու որակի վերահսկմանը: Նման մոտեցումը հնարավորություն կտա զարգացնել հայաստանյան ընկերությունների վերահսկման կարողությունները, մի բան, որի կարիքը բացահայտվել է տեղական ընկերությունների հետ՝ ելնելով ՀՄՀ-Հայաստանի նախկին փորձից: Շինարարության վերահսկողի հետ իր համագործակցության առաջին մի քանի ամիսների ընթացքում ՀՄՀ-Հայաստանի համար պարզ դարձավ, որ Ոռոգման ենթակառուցվածքի թիմի և վերահսկողի գործառույթներից շատերը կրկնում են միմյանց, իսկ գոյություն ունեցող համակարգման ձևաչափը ժամանակատար է և ոչ լիարժեքորեն արդյունավետ: Ստեղծված իրավիճակը հաղթահարելու նպատակով ՀՄՀ-Հայաստանն առաջարկեց փոփոխությունների ենթարկել ընթացիկ պայմանագիրը՝ դրան ավելացնելով ծրագրային կառավարչի գործառույթներ: Վերջին մի քանի ամսվա ընթացքում ՀՄՀ-Հայաստանի և վերահսկողի համագործակցության արդյունքում մշակվել է «Որակի ապահովման և վերահսկման» ուղեցույցը, որում սահմանվում են վերահսկողի ընթացիկ պարտականությունները, ինչպես նաև ծրագրի կառավարմանն առնչվող գործառույթները:

Ջրից դեպի Շուկա բաղադրիչ (ՋՂՇ). Առաջընթացը շարունակվում է

Ինչպես և նշվել է այս փաստաթղթի ներածական մասում հաշվետու ժամանակահատվածում ՋՂՇ ծրագրի կառավարիչը (ամերիկյան ԷյՍիԴիԱյ/Վօկա և հայաստանյան ՎԻՍՏԱԱ պլյուս կազմակերպությունների կոնսորցիումը) շարունակել է իր աշխատանքները ծրագրային հիմնական գործունեության ուղղությամբ՝ ֆերմերների վերապատրաստում և ցուցադրական տեղամասերի հիմնում Հայաստանի ողջ տարածքում, տեխնիկական օժանդակություն Վարկային բաղադրիչի իրականացմանը, ինչպես նաև ֆերմերային խմբերի և գյուղատնտեսական արտադրանքի վերամշակողներին ուղղված օժանդակության ակտիվացում: Ծրագրային առաջընթացն այս բոլոր ուղղություններով ներկայացված է ստորև:

- ՋՆԿ տեխնոլոգիաների և ԲԱԳ բարելավումների ցուցադրումը շարունակվել է բոլոր 10 մարզերում: Ի լրումն արդեն իսկ ծանոթ տեխնոլոգիաներին և մեթոդներին (մակերեսային և ակոսային ոռոգում, կաթիլային ոռոգում, անձրևացում, խոնավաչափեր և այլն) ՋՆԿ բաղադրիչի կողմից ներմուծվել են այնպիսի նոր տեխնոլոգիաներ, ինչպիսիք են արևային պոմպը կամ ջրանիվը: Ոռոգման ջրի կառավարման բարելավման, ինչպես նաև ներկայումս Հայաստանում գոյություն չունեցող ոռոգման գծով խորհրդատվական ծառայություններ ներդնելու նպատակով հիմնվել են մի քանի գործընկերություններ: Այսպիսով, Գյուղատնտեսական Ասոցիացիաների Ֆեդերացիան ներգրավվել է հողի

լազերային հարթեցման աշխատանքներին և շարժական լաբորատորիայի աշխատանքներին, իսկ Արմավիրի ԳԱՄԿ-ի շարժական լաբորատորիայի թիմը խորհրդատվություն է տրամադրել 28 ֆերմերների՝ հիմնվելով հողի և ջրի անալիզների արդյունքների վրա: Հայկական արտադրության ապրանքները խթանելու համար ՋՆԿ բաղադրիչը պայմանագիր է կնքել տեղական կապալառուի հետ երեք տեսակի ինքնամաքրվող ֆիլտրեր պատրաստելու համար՝ 1) ինքնամաքրվող ջրընդունիչ ցանց 2) հիդրոցիկլոն և 3) ավազային ֆիլտր:

- ԲԱԳ բաղադրիչը շարունակել է իր ավանդական ցուցադրությունները, այդ թվում՝ սածիլ/տնկանյութ արտադրող կենտրոններ, «լավագույն փորձը» ներկայացնող բանջարեղենի և մրգի տեսակներ: Միևնույն ժամանակ, ներմուծվել են ԱՄՆ արտադրության պոլիէթիլենային ջերմոցներ, որոնց շնորհիվ խթանվելու է բանջարեղենի սածիլները ջերմոցում աճեցնելու և այնուհետև բաց դաշտ տեղափոխելու մոտեցումը: Տեղական արտադրողները հետաքրքրություն են հայտնել կոմերցիոն նպատակով Հայաստանում այս ջերմոցների արտադրություն հիմնելու վերաբերյալ (տես սույն հաշվետվությանը կից ներկայացվող հաջողության պատմություն N 2):

- Վերապատրաստման բաղադրիչը ներկայումս իրականացվում է Հայաստանի 10 մարզերի ավելի քան 300 համայնքներում: Լարված ժամանակացույցով ընթանում են թե՛ ՋՆԿ և թե՛ ԲԱԳ վերապատրաստումները, բայց և ավելացել են ԲԱԳ գծով դասընթացները՝ հաշվի առնելով վերապատրաստվածների թիրախների փոփոխությունը: Եթե պայմանագրի նախնական տարբերակով նախատեսվում էր, որ ՋՆԿ-ի գծով վերապատրաստվելու է 60,000 ֆերմեր, որից 30,000 մասնակցելու է նաև ԲԱԳ դասընթացներին, ապա 2009թ. Պայմանագրի փոփոխությամբ այդ համամասնությունը համապատասխանաբար փոխվել է 45,000 և 36,000-ի: Բաղադրիչի շրջանակներում մշտապես թարմացվում են ուսումնական նյութերը: Այս տարի բարելավվել են հայաստանյան փորձը ներկայացնող տեսահոլովակները, ինչպես նաև լրացուցիչ տեսահոլովակներ են ձեռք բերվել Իսրայելից: Պատրաստվել է ԲԱԳ ձեռնարկի վերջնական տարբերակը, ինչպես նաև թարմացվել են ՋՆԿ-ի գծով ֆերմերներին տրամադրվող նյութերը՝ ցուցադրական տեղամասերի վերաբերյալ նյութերում զետեղված տեղեկատվության կրկնօրինակումից խուսափելու համար: Վերապատրաստման բաղադրիչը շարունակում է շատ կարևոր դեր խաղալ ՋԴԾ մյուս բոլոր ուղղությունների հաջող իրականացման համար, քանի որ վերջինիս միջոցով ի հայտ են բերվում այն վերապատրաստվածները, որոնք կարող են ցուցադրական կամ առաջատար ֆերմեր դառնալ և կամ ֆերմերների շրջանում օգտակար տեղեկատվություն է տարածվում ծրագրային այնպիսի նախաձեռնությունների մասին, ինչպիսին է վարկային բաղադրիչի նոր փուլը կամ շուկայական տեղեկատվության համակարգը (ARMIS): Նման համագործակցությունը ՋԴԾ տարբեր բաղադրիչների միջև շատ կարևոր է ծրագրի միասնական ազդեցությունն ուժեղացնելու տեսանկյունից:
- Հետբերքահավաքային գործընթացների, վերամշակման և մարկետինգի (ՀՎՄ) բաղադրիչի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 46 ձեռնարկությունների/ֆերմերների խմբերի, իսկ դրանց ընդհանուր թիվը վերջին երեք տարվա ընթացքում հասել է 106-ի: Օժանդակության տեսակներից են, օրինակ, ֆերմերների և չիր արտադրողների, միրգ և բանջարեղեն արտադրողների և պահածոների գործարանների միջև համագործակցությանը նպաստելը: Ավելի քան 50 ֆերմեր երեք ֆերմերական կոոպերատիվներից հաճախել են *«Թարմ միրգ-բանջարեղենի որակի ստանդարտների»* դասընթացներին: Շարունակվել են 2008թ. դեկտեմբերին մեկնարկած

ARMIS համակարգի մարզային ներկայացումները, որոնք տեղի են ունեցել 10 մարզերից 5-ում: Գյուղատնտեսական սեզոնի ընթացքում զգալիորեն աճել է այն ֆերմերների թիվը, որոնք SMS -ի և վեբ կայք այցելելու միջոցով ստացել են տեղեկություններ գյուղմթերքի գների վերաբերյալ՝ 2700 և 5000 հարցում համապատասխանաբար:

2. Հանրային իրազեկման/խորհրդակցական գործընթաց

Ամփոփել շահառուների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, մասնավոր որորտի, դոնոր կազմակերպությունների հետ ընթացող հանրային իրազեկման գործընթացի սկզբունքային խնդիրները և արդյունքները: Առկայության դեպքում, առավել արդյունավետ համակարգման վերաբերյալ առաջարկություններ ներկայացրեք, օրինակ. բնապահպանական, սոցիալական գնահատման և/կամ գենդերային խնդիրների վերաբերյալ հանրային քննարկումների բնույթի և արդյունքների վերաբերյալ:

ՀՄՀ-Հայաստանը շարունակել է հանդես գալ որպես ծրագրային շահառուներին և գործընկերներին ծրագրի իրականացման շուրջ քննարկումներին և իրազեկման գործընթացին ներգրավելու ակտիվ նախաձեռնող՝ այդ նպատակով օգտվելով տարատեսակ ձևաչափերից:

- ՀՄՀ-Հայաստանի Բնապահպանական և սոցիալական գնահատման թիմը ***հանրային քննարկումներ*** է կազմակերպել ոռոգման ենթակառուցվածքների վերջնական նախագծերի շուրջ այն համայնքներում, որոնք իրենց վրա են կրելու վերականգման աշխատանքների ազդեցությունը: Հանրային քննարկումների նպատակն է այդ համայնքների բնակիչներին ներկայացնել նախագծերը և լսել նրանց մտահոգությունները և առաջարկությունները: Հաշվետու ժամանակահատվածում նմանատիպ հանդիպումներ են տեղի ունեցել յոթ ինքնահոս համակարգերի, պոմպակայանների և ներտնտեսային ջրանցքների ընդգրկման տարածքում գտնվող համայնքներում: Չնայած նրան, որ այս քննարկումների հիմնական նպատակն է վեր հանել շինարարության փուլին առնչվող բնապահպանական և սոցիալական խնդիրները, ՀՄՀ-Հայաստանը և Բնապահպանական և սոցիալական գնահատման ու վերահսկման խորհրդատու կազմակերպությունն /ԲՍԳՎԽ/ օգտագործում են այս հնարավորությունը ամբողջական ծրագիրը շահառուներին ներկայացնելու, դրական և բացասական ազդեցությունները վեր հանելու և մեղմացման մոտեցումները համատեղ մշակելու նպատակով: Նման քննարկումները նաև լրացուցիչ տեղեկատվության աղբյուր են հանդիսանում, քանի որ հնարավոր են դարձնում անմիջապես գյուղի բնակիչներից տեղեկանալ, թե որոնք են ոռոգման համակարգին առնչվող նրանց հիմնական խնդիրները: Ամենից հաճախ քննարկվող թեմաների շարքում են շինարարության ժամկետները (որ չհամընկնի գյուղատնտեսական սեզոնի հետ), ոռոգման համակարգում առկա ջրի բարձր կորուստները, գյուղացիների մտահոգությունը ոռոգման ջրի սակագնի վերաբերյալ և այլ հարակից հարցեր:
- Վերջին 12 ամսվա ընթացքում ՀՄՀ-Հայաստանը ձեռնարկել է մի շարք ***քննարկումներ կլոր սեղանի շուրջ և ծրագրային ներկայացումներ***, որոնցից կարևորները ամփոփված են ստորև.
  - ԲՍԳՎԽ առաջին տարեկան սեմինարի նպատակն էր ամփոփել պայմանագրային առաջին տարվա արդյունքերը և ներկայացնել ապագա անելիքները: Բազմաթիվ թեմաների շարքում կարևորվեցին նաև հանրային լսումների փորձը և քաղված դասերը ՀՄՀ կապալառուների և գործընկերների հետ կիսելը:
  - Ջրօգտագործողների ընկերությունների /ՋՕԸ/ ներկայացուցիչների հետ աշխատանքային հանդիպման նպատակն էր ներկայացնել Ոռոգման կառավարման կառույցների ինստիտուցիոնալ հզորացման ծրագիրը և ՋՕԸ-երից լսել իրենց մտահոգությունների և կարիքների մասին:

- ՀՄՀ-Հայաստանի վարկային բաղադրիչով հետաքրքված ֆինանսական կառույցների ներկայացուցիչների հետ աշխատանքային հանդիպման նպատակն էր ներկայացնել այդ բաղադրիչը, վարկավորման ենթակա գործունեության հիմնական ուղղությունները և հավատարմագրման գործընթացը:
- Հետազոտող հանրությանը ներկայացվեց ծրագրի Մոնիթորինգի և գնահատման շրջանակներում իրականացված երկու հետազոտություն՝ Տվյալների որակի գնահատումը և Գյուղատնտեսական տվյալների հետազոտությունը:

- ***Այցելությունները ծրագրային տեղամասեր*** մեծապես օգտագործվել են ծրագրային իրականության մասին պատկերացումները հստակեցնելու համար ինչպես ՀՄՀ-Հայաստան թիմի, այնպես էլ Շահառուների խորհրդի, ԱՄՆ և ՀՀ կառավարության պաշտոնյաների համար: Հաշվետու ժամանակահատվածում տեղի են ունեցել բազմաթիվ նմանատիպ այցելություններ, այդ թվում՝ ԱՄՆ դեսպանի այցելությունը Տավուշի մարզ և ԱՄՆ դեսպանի և ՀՀ փոխվարչապետի այցելությունը Կոտայքի մարզ:
- Տեղեկատվության տարածման և իրազեկման համար շարունակվել է այնպիսի հիմնական միջոցների օգտագործումը, ինչպիսիք են եռամսյակային տեղեկատուները, ինտրնետային կայքում թարմ նյութերի զետեղումը, մամլո հաղորդագրությունները և մամլո ասուլիսները: ՀՄՀ-Հայաստանը նաև օգտագործել է պրոֆեսիոնալ նկարահանող խմբի ծառայություններն այնպիսի կարևոր միջոցառումները տեսագրելու համար, ինչպիսիք են սեպտեմբերի 16-ի այցը Կոտայքի և Արագածոտնի մարզեր, Շահառուների խորհրդի ընտրությունները և ՋԴՇ առաջիկա ցուցահանդեսը: Նկարահանված նյութն ապագայում օգտագործվելու է տարբեր նպատակներով՝ այդ թվում առանձին ֆիլմում և տարատեսակ հանրային իրազեկման նյութերի մեջ: .
- ***Շահառուների խորհուրդ /ՇԽ/ և քաղաքացիական հասարակության ներգրավում***. ՀՄՀ-Հայաստանը շարունակել է սերտորեն համագործակցել ծրագրի Շահառուների խորհրդի հետ (իսկ վերջինիս միջոցով նաև լայն քաղաքացիական հասարկության հետ)՝ ծրագրային նպատակներն ու խնդիրները քաղաքացիական հասարկության միջոցով տարածելու համար: Ծրագրային երրորդ տարում ՇԽ անդամները կարևորագույն դերակատարում ունեցան վարկային բաղադրիչը ծրագրում պահպանելու հարցում՝ միասնական դիրքորշմամբ հանդես գալով Կառավարման խորհրդում: Ծրագրի համար այս դժվար տարվա ընթացքում նրանք հանդիպումներ նախաձեռնեցին ԱՄՆ և ՀՀ կառավարության ներկայացուցիչների հետ՝ վերջիններիս ներկայացնելով իրենց մտահոգությունները ծրագրի ապագայի մասին: ՀՀ էկոնոմիկայի նախարարի հետ հանդիպման ընթացքում կարևորվեց Հայաստանի կատարողականը 2009թ. համար՝ ըստ ՀՄԿ գնահատման 16 չափորոշիչների, իսկ ԱՄՆ դեսպանի հետ քննարկումը հիմնականում վերաբերում էր Գյուղական ճանապարհների վերականգնման բաղադիչը ծրագրում պահպանելու հնարավորությանը:

  2009թ. սեպտեմբերի 26-ին Հայաստանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները ընտրեցին «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Շահառուների խորհրդի 15 անդամներին: Ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած 378 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները հնարավորություն էին ստացել ընտրել այս ինքնատիպ կառույցի անդամներին, որի միջոցով իրականացվում է շահառուների ներգրավումը ՀՄՀ-Հայաստան բազմամիլիոն արժողությամբ ծրագրին, ինչպես նաև վերջինիս հանրային վերահսկողությունը:

Առաջարկություն: Ի հավելումն իր գործունեության հիմնական ուղղությունների, այն է՝ ոռոգման ենթակառուցվածքների վերականգնում և աջակցություն գյուղատնտեսության ոլորտին, ՀՄՀ-Հայաստանը հանդես է գալիս նորատիպ նախաձեռնություններով, որոնք առնչվում են, օրինակ, մոնիտորինգին և գնահատմանը, բնապահպանական և

սոցիալական ազդեցության գնահատմանը, կամ քաղաքացիական հասարակությանը ծրագրում ներգրավելուն: ՀՄՀ-Հայաստանը զգալի քայլեր է ձեռնարկում այս բնագավառներում իր աշխատանքների մասին իրազեկելու ուղղությամբ, այդուհանդերձ արվածի մասին պատկերացումները դեռ սահմանափակ են: Մյուս տարվա ընթացքում նախատեսվում է առավել ակտիվորեն ներգրավել կառավարության և ՀԿ մեր գործընկերներին, հետազոտող հանրությանը և այլ շահագրգիռ կողմերի այս բնագավառներին առնչվող գործունեությանը՝ ոչ միայն մեր փորձի մասին ավելի լավ տեղեկացնելու, այլև նրանց առաջարկությունները և կարծիքները լսելու նպատակով:

Առաջարկություն: Տեղեկատվության տարածման և հանրային իրազեկման ավանդական միջոցներին զուգահեռ կարևորում ենք առավել նորարական և ստեղծագործ մոտեցումների կիրառումը ծրագրի մասին պատկերացումները բարելավելու և վերջինիս ազդեցությունը բարձրացնելու ուղղությամբ: Ի պատասխան այս հրամայականի, ՀՄՀ-Հայաստանի ՋՂԾ թիմը առաջարկել է երկու նոր գաղափար, այն է՝ ՋՂԾ ցուցահանդեսը և «Գնիր հայկականը» քարոզարշավը, որոնք երկուսն էլ մեկնարկելու են 2009-ի հոկտեմբերին:

3. Կառավարության դերը և համագործակցություն կառավարության հետ

Նկարագրել կառավարության ներդրումը ՀՄՀ-Հայաստան ծրագրի իրականացմանը՝ որտեղ հարկ է նշել դոլարային համարժեքը: Այն կարող է ներառել տարբեր տեսակի աջակցություն, այդ թվում՝ դրամական միջոցներ, ՀՄՀ-Հայաստանի իրականացման գրասենյակին աջակցելու նպատակով տրամադրված սարքավորումների ԱՄՆ դոլարի համարժեքը, ինչպես նաև Համաձայնագրում նշված Կառավարության այլ պարտավորվածությունները և պարտականությունները, ներառյալ բազմամյա ֆինանսական պլանում նշված նմանատիպ այլ աջակցությունը և լրացուցիչ համաձայնագրերով կարգավորվող աջակցությունը:

Ծրագրի երրորդ տարում ՀՀ Կառավարությունը շարունակել է ակտիվորեն ներգրավվել ՀՄՀ-Հայաստան ծրագրի իրականացմանը, իսկ որոշումներ կայացնողի իր իրավասությունն իրականացրել է ծրագրի Կառավարման խորհրդի միջոցով: ՀՀ կառավարության գործընկերների մասնակցությունը ծրագրին հաշվետու ժամանակահատվածում ամփոփված է ստորև.

- Ի կատարումն 2008թ. հուլիսին ՀՄԿ-ի և ՀՀ Կառավարության միջև կնքված Լրացուցիչ համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ՀՀ Կառավարությունը 16,800,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ է հատկացրել գյուղական ճանապարհների առաջին փաթեթում ներառված ճանապարհների շինարարության համար:
- ՀՀ Կառավարության 2009թ. հուլիսի 9-ի N 776 որոշմամբ Կառավարությունը պարտավորվել է ֆինանսավորել և իրականացնել Այգեզարդ, Շենիկ և Մանթաշ ինքնահոս համակարգերի կառուցման գոտում գտնվող գյուղերի վերաբնակեցման գործողությունները, որի համար մոտ 40,000 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ է հատկացվել Պետական բյուջեի պահուստային ֆոնդից՝ հողի/գույքի դիմաց փոխհատուցում վճարելու և անվճար սերվիտուդի/հողի առքուվաճառքի պայմանագրերը գրանցելու նպատակով:
- Ի կատարումն Համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունների ՀՀ կառավարությունը քայլեր է ձեռնարկել մի շարք ծրագրային նախապայմանների կատարման ուղղությամբ, այդ թվում՝ Գյուղատնտեսական հաշվառման մասին

օրենքի ընդունում, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի որոշ հոդվածների (հոդված 27, հոդված 1026, նոր հոդված 1038.1) փոփոխություն՝ գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորումը հեշտացնելու նպատակով, ինչպես նաև ՋՕԸ ծախսածածկման նոր, առավել իրատեսական թիրախների սահմանում:

- Ինչպես և նախկին տարիներին, ՀՀ Կառավարությունը կատարել է ծրագրային գործունեության շրջանակներում բյուջետային հատկացումների գծով իր բոլոր պարտականությունները, ինչպես օրինակ կենսական նշանակության ճանապարհների վերականգման կամ ոռոգման համակարգի պահպանման համար հատկացումները:

4. Համակարգում այլ դոնոր կազմակերպությունների հետ

Նկարագրել ՀՄՀ-Հայաստան ծրագրի գործունեության համակարգումը ԱՄՆ-ի արտերկրյա աջակցության այլ ծրագրերի և այլ դոնոր երկրների կողմից տրամադրված աջակցության հետ: Դա կարող է ներառել այլ դոնորների կողմից տրամադրած համաֆինանսավորում՝ ծրագրի վերակազմավորման և ծախսերի վերահաշվարկի դեպքում:

Հաշվետու ժամանակահատվածում Համաշխարհային բանկը (ՀԲ) շարունակել է հանդիսանալ ՀՄՀ-Հայաստանի հիմնական դոնոր գործընկերը: ԳԵՎԾ երկրորդ փաթեթի այն ճանապրհների նախագծերը, որոնք հանվել էին ՀՄՀ-Հայաստան ծրագրից, տրամադրվել են ՀԲ-ին: Այսպիսով, ՀԲ գյուղական ճանապարհների վերականգման ծրագրում ընդգրկվել է 92 կմ ճանապարհային հատված Հայաստանի 5 մարզերում:
Ինչ վերաբերում է Ոռոգման ենթակառուցվածք բաղադրիչին, ապա ՀԲ-ն իրականացնելու է Արմավիր և Թալին մայր ջրանցքների բետոնապատումը, իսկ ՀՄՀ-Հայաստանը վերականգնելու է ոռոգման կառուցվածքները նույն ջրանցքներում: ՀՄՀ-Հայաստանը և ՀԲ-ն համագործակցում են նաև Կենսամակարդակի ամբողջացված հետազոտության շրջանակներում, քանի որ երկու գործակալությունն էլ տեխնիկական աջակցություն են ցուցաբերում աղքատության հաշվարկների մեթոդաբանության բարելավմանը, իսկ ՀՄՀ-Հայաստանը նաև համաֆինանսավորում է ընդլայնված գյուղական ընտրանքը:
ՋԴԾ շրջանակներում ծրագրի կառավարիչ հանդիսացող ԷյՍիԴիԱյ/Վօկան և ԱՄՆ գյուղատնտեսության նախարարությունը/Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման հիմնադրամը (CARD) շարունակում են համատեղ իրականացնել սննդի ապահովության և հիգենայի վերաբերյալ դասընթացները: Ոռոգման կառավարման կառույցների ինստիտուցիոնալ հզորացման ծրագրի շրջանակներում մշտական քննարկումներ են իրականացվում ՀԲ-ի հետ ոռոգման քաղաքականության և ծրագրի իրականացման հարցերի շուրջ:

1. **Հաջող փորձի պատմություններ.** *կցվում են*
   - Ջուրն ավելի թանկ արժե քան չմշակվող հողը
   - Հայաստանյան ֆերմերներին դուր են գալիս ամերիկյան ջերմատները, իսկ հայաստանյան արտադրողները պատրաստ են կազմակերպել դրանց արտադրությունը